

Հրատարակուած է
Մինաս Քորթունի աջակցութեամբ:

ՄՀԵՐ ՊԷՔԱՐԵԱՆ

ԿԱՐՏԵԻԿ

հրատարակչատան կողմէ

Այս հեքեաթը առնուած է Համշենական
բանահիւսութիւնէն: Պահած ենք կարգ մը
խօսակցական ձեւեր, որոնք հարիր են հեքեաթներու:
հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

Արաս հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 243 06 02
info@arasyayincilik.com
www.arasyayincilik.com
Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 329

ԿԱՐՄԼԻԿ
Մհեր Պէքարեան (Մահիր Էօզքան)

Խմբագիր՝
Բագրատ Էսդուգեան

Սրբագրութիւն՝
Վահագն Քէշիշեան


Նկարազարդում
Էսմէ Մատրա

Կողք եւ էջադրութիւն՝
Մելիսա Արսէնեան

Սեպտեմբեր 2025, Իսթանպուլ

ISBN 9786257460798

ՄՀԵՐ ՊԷՔԱՐԵԱՆ
ԿԱՐՄԼԻԿ



Նկարազարդում
ԷՍՄԷ ՄԱՏՐԱ






Աշխարհիս չափ տարիքոտ
սար մը կար Քաջքար անունով:
Քաջքարը պտտիլ շատ կը սիրէր:
Ատոր համար ալ պզտիկութենէն
ի վեր աշխարհիս վրայ տեղ մը չէր
ծգած, ուր պտտած չըլլար: Ծովեր
անցած էր, անապատներ անցած,
սառած ծովերուն մէջ մսած, երկար
անապատներուն եփած: Ծառոտ
եղած էր, ցախոտ եղած էր,
կորդ եղած էր, արտ եղած էր:

Օր եղաւ ցանեցին, ծիլ ու ծաղիկ
դարձաւ, օր եղաւ ձիւնի տակ ճերմակ
եղաւ: Այսպէս եղաւ, այնպէս եղաւ,
ի վերջոյ օր մը, Քաջքարին ճամբան
սեւ ծովուն ափը ինկաւ:

Երբ ծերունի Քաջքար Սեւ ծովու
 ափը հասաւ, անդին նայեցաւ, ասդին
 նայեցաւ, ո՛չ ոք տեսնելով ինքն իրեն
 ըսաւ. «Հէլէ նստիմ, յոգնեցայ, շատ
 ապրեցայ, ծերացայ», ըսաւ ու տեղն ու
 տեղը նստաւ: Ոտքը ծովուն մէջ խրեց,
 գլուխը ամպերուն հասաւ:

Սեւ ծովը պառկած տեղէն արթնցաւ,
 երբ ջուրը քիչ մը բարձրացաւ:
 Քաջքարը տեսաւ ու ըսաւ.

- Այ՛ ծերունի, դուն ո՞վ ես,
 ուրկէ՞ կու գաս,
 ո՞ր կերթաս:



Քաջքարը ըսաւ.

- Իմ անունս Քաջքար է,
 ես ծերունի լեռ մըն եմ,
 ամէն տեղ կը պտտիմ,
 ալ երթալու տեղ չունիմ:

Սեւ ծովը ըսաւ.

- Իմ անունս Սեւ ծով է,
 աշխարհը դեռ տեսած չեմ,
 դուն ըսէ՛ ես իմանամ,
 ինչ որ գիտես՝ գիտնամ:

Երբ Սեւ ծովը «պատմէ»
 ըսաւ, Քաջքարը սկսաւ
 պատմել: Պատմածները
 մէկէն արտասուք
 եղան, հոսեցան երեսն
 ի վար:

Արցունքը քարին դպաւ, հողին դպաւ,
ծառին դպաւ, ցախին դպաւ, վիհին
դպաւ, ձորին դպաւ, դաշտին դպաւ:

Մարդու ալ դպաւ, չեմ գիտեր:

Տեղ եղաւ ջրվեժ, տեղ եղաւ լիճ
դարձաւ: Զառիվար վազվզելով,
դաշտի վրայ օրօրուելով գնաց Սեւ
ծովը գտաւ:

Մարդ ալ գտաւ, չեմ գիտեր:

Քաջքարին արցունքները աղբիւր
եղան, առուակ եղան, գետ եղան:
Գետափներուն արտ եղան, ծիլ եղան,
ծաղիկ եղան:

Գետին շուրջը անասուններուն բոյն,
մարդոց ալ տուն եղան: Գետին մէջն
ալ տեսակ-տեսակ ձուկ եղան:

Այդ ձուկերէն մէկն ալ Կարմլիկն էր:

Միւս ձուկերուն նման ան ալ ջուրը ուր
որ տանի՝ հոն կ'երթար, դիմացը ինչ որ
ելլէ՝ ան կ'ուտէր: Գետին ճամբան ուր
կ'երթայ, չէր գիտեր: Ինչո՞ւ գետին հետ
կ'երթայ, ան ալ չէր գիտեր: Անունը ես
տուի, ինք չէր գիտեր: Ինչո՞ւ Կարմլիկ
տուի, ան ալ չէր գիտեր:

